**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

**Հոդված 20. Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը**

1. Ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է լիազոր մարմինը՝ սույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված ընդհանուր հիմունքներով կամ մրցութային կարգով՝ ընդերքօգտագործման թույլտվության կամ համաձայնության, լեռնահատկացման ակտի, ինչպես նաև ընդերքօգտագործողի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման միջոցով:

2. Ընդերքօգտագործման իրավունքն անբաժանելի է և կարող է պատկանել միայն մեկ իրավաբանական անձի (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությանը):

3. Անժամկետ և անհատույց ընդերքօգտագործումն իրականացվում է սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

~~3. Անժամկետ և անհատույց ընդերքօգտագործումն իրականացվում է ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, սեփական կարիքների համար ընդերքօգտագործողին՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասերից:~~

4. Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար կարող են դիմել միայն հատուկ թույլտվություն ունեցող իրավաբանական անձինք: Հատուկ թույլտվության տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 48. Իրավաբանական և ֆիզիկական անձանց ~~անձանց և քաղաքացիներին~~ հատկացված հողամասերի սահմաններում ընդերքօգտագործումը**

~~1. Իրավաբանական անձինք և քաղաքացիները, առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, տնտեսական և կենցաղային սեփական կարիքների բավարարման նպատակով կարող են կատարել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ մինչև 2 մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև 5 մետր խորությամբ՝ կառավարության սահմանած կարգով, տեղյակ պահելով լիազոր մարմնին:~~

1.Իրավաբանական և ֆիզիկական անձինք առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում, կառավարության սահմանած կարգով տեղյակ պահելով լիազոր մարմնին, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման, կարող են իրականացնել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հետևյալ աշխատանքները.

1) բացառապես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ սեփական տնտեսական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով՝ մինչև երկու մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև հինգ մետր խորությամբ.

2) շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ օրացուցային տարվա ընթացքում առավելագույնը 20 խորանարդ մետր ծավալով.

3) շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ բազմաբնակարան շենքերի և հասարակական շինությունների կառուցման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում նշված խորությամբ:

**Հոդված 62. Ընդերքօգտագործման վճարներից ազատվելը**

1. Ընդերքօգտագործման վճար չեն վճարում այն ընդերքօգտագործողները, որոնք՝

1) ~~սեփական կարիքների համար~~ իրենց հատկացված հողամասի (անկախ սեփականության ձևից) սահմաններում, համաձայն սույն օրենսգրքի 48-րդ հոդվածի, կատարում են ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում.

2) իրականացնում են ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրություններ (հրաբխային, սեյսմաբանական և արտածին երկրաբանական երևույթների մշտադիտարկում, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական հետազոտություններ և այլն).

3) ստեղծում են միներալոգիական, հնէաբանական և այլ հավաքածուներ.

4) իրականացնում են եզակի երկրաբանական գոյացությունների, բնության հուշարձանների ուսումնասիրություն, նկարագրում և պահպանում: